ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ

Հարգելի պարոն Սուջյան՝

Արթիկի համայնքապետարանի և «Սուջյանս» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի հունվարի 15-ին կնքվել է պայմանագիր համակարգչային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների կատարման համար: Որով Ձեր կազմակերպությունը կնքված պայմանագրի հավելված թիվ 1 ըստ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով պետք է կատարեր հետևյալ ծառայությունները՝

1. համակարգիչների և համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման *ծառայություններ*
2. տպիչների վերանորոգման քարթրիջների լիցքավորման ընթացիկ նորոգման և պահպանման *ծառայություններ*

Արդյունքում պարզվել է,որ համաձայն իրավական անձանց պետական ռեգիստրի, պետական միասնական գրանցամատյանի՝ «Ֆրանկո Սուջի» ՍՊԸ ընկերության և «Սուջյանս» ՍՊԸ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Լիպարիտ Հրաչյայի Սուջյանը: Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ Լիպարիտ Սուջյանի Հրաչյայի Ա/Ձ (ՀՎՀՀ 57448966) 2023թվականի մայիսի 13-ից մինչև 2025թվականի մայիսի 13-ը ներառված է եղել գնումներ գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Ֆրանկո Սուջի» ՍՊԸ-ի ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև 2026թվականի դեկտեմբերի 31-ը ներառված է գնումներ գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ստացվում է, որ Լիպարիտ Սուջյանի Հրաչյայի Ա/Ձ, «Ֆրանկո Սուջի» ՍՊԸ-ն և «Սուջյանս» ՍՊԸ ընկերությունները հիմնադրվել են Լիպարիտ Հրաչյայի Սուջյանի կողմից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետով «Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անինք համարվում են փոխկապակցված եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելովընդհանուր տնտեսական շահերից»

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն միակողմանի և ամբողջովին լուծում է «ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/2 » նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ համակարգչային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների մատուցման 18.01.2025 թվականի «Սուջյանս» ՍՊ ընկերության և Արթիկ համայնքապետարանի միջև կնքված պայմանագիրը:Պայմանագիրը համարելով լուծված ընդհանուր 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամի չափով, իսկ պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկ:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարութկան 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ձեր կազմակերպությանը կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. Ոսկանյան**

Կատարող՝ գնումների համակարգող
Ղևոնդ Գրիգորյան